

ՎԱԶԳԵՆ Ա ՇԻՆԱՐԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հայ կաթողիկոսներից շատերը նաև շինարար են եղել: Սկսած Հայոց առաջին Հայրապետ Գրիգոր Լուսավորչից: Նրա օրոք 301—303 թթ. կառուցվեց աշխարհի հնագույն քրիստոնեական տաճարներից մեկը՝ Սուրբ Էջմիածնի տաճարը: Նրա օրինակին հետևեցին Կոմիտաս Կաթողիկոսը՝ Սուրբ Հռիփսիմեի տաճարի (618 թ.), Եզր Կաթողիկոսը՝ Սուրբ Գայանեի տաճարի (630 թ.), Ներսես 3-րդ Կաթողիկոսը՝ Զվարթնոց տաճարի (642—666 թթ.) կառուցողները, նրանցից ներսես 3-րդը հորջորջվեց Շինող մականվամբ: Անվանումները կարելի է լրացնել հետագա դարերի օրինակներով:

Մեր ժամանակներում ավելի լայն ընդգրկումով այդպիսին եղավ Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա-ը: Սուրբ Լուսավորչի գահաժառանգ դառնալու առաջին իսկ տարիներից նա ուխտեց՝ «Պիտի տքնինք ապա վերանորոգելու և վերազարդելու մեր հայրենի արբավայրերը, վանքերը և եկեղեցիները, որ՝ պիտիք են Ս. Գայանեն, Խոր-Վիրապը, Օշականը, Ս. Գեղարդը և ուրիներ, որոնք հոգևոր կյանքի այուները կհանդիսանան և հոչակված տաճարներ աղոթքի և ուխտի ու զմայլելի հուշարձաններ հայ ճարտարապետության փառքի»:

Խոսքը գործի վերածելով, իր գահակալության բոլոր տարիներին Վազգեն Ա-ը ծավալեց աննախադեպ մեծամասշտաբ ու բազմաբնույթ շինարարական գործունեություն: Եթե նկատի ունենանք, որ դա իրագործվեց այնպիսի ժամանակներում, երբ բովանդակ երկրում դեռևս իշխում էր կրոնահալած ու կաշկանդիչ մթնոլորտ, ապա Վազգեն Ա. Կաթողիկոսի կառուցողական իրագործումները հիրավի սխրանք պիտի համարվեն:

Անհրաժեշտ նյութական միջոցները նա կարողացավ ապահովել, այդ գործում ներգրավելով Սփյուռքի առանձին կազմակերպությունների ու մեծ թվով բարերարների (որոնց անունները հիշատակված են Նոր Վեհարանի պատին փակցված մարմարյա տախտակներին) հատկացված նվիրատվությունները, ինչպես նաև մասհանումներ կատարելով Եկեղեցու եկամուտներից:

Նկատի ունենալով, որ գործ է ունենալու հայկական պատմաճարտարապետական մեծարժեք հուշարձանների հետ, ուստի խուսափելու համար հնա-

րավոր է սխալներից ու մոռահոգելով ապահովել մասնագիտական պատշաճ մակարդակ, Վազգեն Ա-ի խնդրանքը Հայաստանի կառավարությունը 1956 թ. իրեն տրամադրեց խորհրդատու մի հանձնաժողով: Դրա անդամները եղան վաստակավոր ճարտարապետ Միքայել Մազմանյանը (նախագահ), ճարտարապետության դոկտոր-պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանը (գիտական քարտուղար, 1971 թվականից՝ նախագահ), Հայաստանի ԳԱ ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանը, ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը, պատմական գիտությունների դոկտոր Կարո Ղաֆադարյանը, ճարտարապետության դոկտոր Կոնստանդին Հովհաննիսյանը, ճարտարապետության թեկնածու Ալեքսանդր Սահինյանը, վաստակավոր ճարտարապետ Բաղդասար Արզումանյանը, վաստակավոր շինարար, ինժեներ-կոնստրուկտոր Կոնստանդին Ալթունյանը և Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանը:

Հանձնաժողովի կոմպլեքսային կազմը բարերար անդրադարձ ունեցավ տարբեր տեսակի իրագործումների նկատմամբ լիարժեք գիտա-մասնագիտական ու մեթոդական հսկողություն ունենալու, քննարկվող նախագծերում, կառուցողական և արվեստի հարցերում խորամուխ լինելու առումով: Որպես այդ հանձնաժողովի ի սկզբանե անդամ հարկ եմ համարում նշել մի կարևոր ճշմարտություն: Կաթողիկոս Վազգեն Ա-ի շինարարական գործունեությունը բոլոր տարիներին ընթացավ Հայաստանի պետական մարմինների մշտական աջակցությամբ:

Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի վթարային վիճակը վաղուց մտահոգություն էր առաջացրել: Այդ մասին Գևորգ 6-րդ Չորեքշյան Կաթողիկոսը դիմել էր վերադաս մարմիններին: Նրա մահվանից հետո, նախքան նոր կաթողիկոսի ընտրությունը՝ 1954—1955 թթ., Հայաստանի կառավարության ջանքերով ու միջոցներով Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում ինժեներ Կոնստանդին Ալթունյանի նախագծով իրականացվեցին կոնստրուկտիվ համակարգի հուսալի ամրացման, ողջ կառուցվածքի վերանորոգման, կտուրի թիթեղապատման, որմնանկարների վերականգնման ու լրացման (գիտ. ղեկավարությամբ հայկական միջնադարյան կերպարվեստի մեծ գիտակ Լ. Դուրնովոյի) ու այլ կարգի աշխատանքներ:

Սակայն դրանցով անելիքը սպառված չէր, ուստի, այն կատարվեց Վազգեն Ա-ի գահակալության տարիներին՝ օգտագործելով հայ մեծ բարերար Գալուստ Կյուլպենկյանի 400.0 հ. դոլլարի չափով տրամադրած միջոցները:

Նախքան աշխատանքների ծավալումը, ճարտարապետ Ալեքսանդր Սահինյանը պեղումներ կատարեց տաճարի ընդհատակում, որոնք պսակվեցին գիտական կարևոր հայտնագործություններով: Դրանից հետո տաճարի հատակները (ներառյալ խորանների, ավանդատների ու թանգարանային մասի սենյակների) սալարկվեցին մարմարով: Տաճարի պատերի կրողունակությունը վերականգնվեց նրանցում հեղուկ շաղախի ներարկման միջոցով: Ճարտարապետական ստեղծագործության մի հրաշալի կոթող եղավ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով կառուցված Ավագ խորանի մարմարակերտ խաչկալը: Դրա վրա ամփոփվեց Աստվածամոր պատկերը (նկարիչ Գր. Ճիլդյան): Նույնպիսի նկարագրով են բնութագրվում նրա էսքիզներով իրականացված «Իջման սեղանը», դասը ատյանից անջատող մարմարյա բազրիքներն ու բրոնզաձույլ դռնակները: Տաճարի ներքին բարեզարդման մասը կազմեցին լուսամուտների երկաթյա վանդակները (պատրաստված Գրի-

գոր Խանջյանի էսքիզներով), Մկրտության նոր ավազանը (ճարտ. Ա. Գալիկյանի նախագծով), դրա պատին ամփոփված Քրիստոսի պատկերով որմնանկարը (նկարիչ Հովհաննես Մինասյան), բյուրեղապակյա նոր ջահերը՝ նվիրատվությամբ փարիզահայ բարերար Կարպիս Չրբաշյանի, և այլն: Նոր ու հնշեղ զանգերի համակարգով փոխարինվեցին Մայր տաճարի հին զանգերը: Դրսի կողմից տաճարի բոլոր կողմերի հարթակները սալարկվեցին, ու շրջապատը բարեկարգվեց: Ավելի ուշ լիովին վերականգնվեց տաճարի հարավային զանգակատունը, որը փուլ էր եկել 1921 թ. ու վերականգնումը մընացել էր թերավարտ:

Զուգահեռաբար վերականգնման ու բարեզարդման աշխատանքներ ընթացան Մայրավանքի տարածքում գտնվող շենքերում, սկսեցին կառուցվել նորերը: Առանձնապես արժևնահիշատակ են Հին ու Նոր Վեհարանների ու Ղազարապատի միաբանական սեղանատան, ինչպես նաև ավանդական «Տրդատա դռան» վերականգնման արդյունքները: Կիսախարխուլ կամ բարձիթողի վիճակից նրանք հառնեցին իրենց ճարտարապետական կուռ հնչեղությամբ ու ներքնատեսքերի հոյակապությամբ՝ իրականացված շինարարական բարձր որակով:

Նորոգվեցին տպարանի, ճեմարանի և Երեմյան խցերի շենքերը, նրանցից առաջինը լրացվեց երկրորդ հարկով, երկրորդին կցակառուցվեց նոր մաս: Մայրավանքի բակի հարավային պարագիծը լրացվեց հյուրանոցի նոր շենքով (հեղ. ճարտ. Բ. Արզումանյան), իսկ հյուսիսայինը՝ ժամացույցի աշտարակով (հեղ. ճարտ. Ա. Գալիկյան): Բակի կանաչապատման և ընդհանուր բարեկարգման մասը կազմեցին Եղեռնի հուշարձանն ու «Կաթնաղբյուրը» (ճարտ. Ռ. Իսրայելյան), Մկրտիչ Խրիմյան Կաթողիկոսի հիշատակին նվիրված «Շերեփ» աղբյուր-հուշարձանը (ճարտ. Արեգ Իսրայելյան):

Կանաչապատման և բարեկարգման նույնպիսի աշխատանքներ կատարվեցին Նոր Վեհարանի բակում (հեղ. ճարտ. Է. Ութուջյան): Տեղադրված ճարտարապետական փոքր ձևերի ու Ալեք Մանուկյան Գանձատան հոյակապ շենքի տեղադրությամբ բակը թերվեց վերջնական բարետես վիճակի:

Այսպիսով, անցյալում անբարետես վիճակում գտնվող Հայոց Առաքելական Եկեղեցու սրբազործված կենտրոն Սուրբ Էջմիածնի Մայր տաճարն ու Մայրավանքի ողջ համալիրը բերվեց վայելուչ տեսքի՝ դեպի իրեն գրավելով հավատացյալների ու հյուրերի տարեցտարի ավելացող բազմություն:

Վեհափառ Հայրապետը հետագա տարիներին իր շինարարական գործունեությամբ ընդգրկեց բոլոր գործող վանքերն ու եկեղեցիները, ու այդ ուղղությամբ նույնպես հունձքը բացառիկ հարուստ եղավ: Ներկա հաղորդմամբ հնարավոր չէ թեկուզ հակիրճ անդրադառնալ դրանցից յուրաքանչյուրում կատարվածին (այդ մասին ավելի մանրամասն տեղեկություններ են բերված Վազգեն Ա-ի գահակալության տարիների շինարարական գործունեության պատմությանը նվիրված մեր «Եկայք շինեսցուք» գրքում՝ լույս տեսած 1989 թ.), ուստի ստիպված ենք ստորև ներկայացնել միայն վանքերի ու եկեղեցիների թվարկումը:

Էջմիածնի Սուրբ Հռիփսիմե տաճարում և բակում կատարվեցին մեծամասշտաբ վերանորոգման ու բարեկարգման աշխատանքներ: Տաճարի ներսում Ալ. Սահինյանի ղեկավարությամբ կատարված պեղումներով նույնպես գիտական կարևոր հայտնագործություններ եղան, իսկ տաճարի արևելյան կողմում բացվեցին ավելի հին մատուռի մնացորդներ: Հիմնական վերանո-

ոգման ենթարկվեցին Էջմիածնի Սուրբ Գայանեի տաճարը, Շողակաթ և քաղաքային Սուրբ Աստվածածին եկեղեցիները (վերջինիս կցակառուցելով մի նոր զանգ-աշտարակ), բոլորի բակերը բարեկարգվեցին:

Վեհափառ Հայրապետի հատուկ ուշադրության առարկան եղավ Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին: Հիմնովին վերակառուցվեց ու բարեզարդվեց սրբի դամբարանը, եկեղեցու պատերը ծածկվեցին բարձրարվեստ որմնանկարներով, որոնց հեղինակն է նկարիչ Հովհաննես Մինասյանը:

Մայր Աթոռի շինարարական գրասենյակի ու հուշարձանների պահպանության պետական վարչության արվեստանոցների միջոցով (պատվերային կարգով) հիմնական վերակառուցման ենթարկվեց Երևանի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցին: Սուրբ Սարգիս եկեղեցու վերակառուցումը մեծածախս ու աշխատատար եղավ: Այն կատարվեց լոնդոնաբնակ բարերար Սարգիս Քյուրքճյանի տրամադրած միջոցներով, բարդ ու հետաքրքիր մի նախագծով, որի հեղինակներն էին ճարտարապետներ Ռաֆայել Իսրայելյանն ու Արծրուն Գալիկյանը: Արտաքին պատերի բարձրարվեստ քանդակապատումը կատարվեց շնորհալի քանդակագործ Արտաշես Հովսեփյանի կողմից: Ինչպես նշեց օծման առիթով Վազգեն Ա Կաթողիկոսն իր քարոզում՝ Սուրբ Սարգիս եկեղեցու վերակառուցմամբ «Քաղաքամայր Երևանն օժտվեց մի նոր զարդով, հայկական ճարտարապետության մի նոր կոթողով, աղոթքի աքանչելի նոր սրբավայրով»:

Տարիների անդուլ ջանքերով պատշաճ տեսքի բերվեցին Գեղարդավանքի ու Խոր Վիրապի վանքային համալիրները, Էջմիածնի Շողակաթ, Երևանի Զորավոր և Սուրբ Հովհաննես, Բջնիի Սուրբ Աստվածածին, Սևավանի Սուրբ Հովհաննես, Նորագավթի Սուրբ Գևորգ եկեղեցիները:

Մասնավոր վերաշինության ու նորոգումների ենթարկվեցին Աշտարակի Սուրբ Մարինե, Արգավանդի Սուրբ Հակոբ, Նոր Բայազետի քաղաքային, Վարդենիսի Սուրբ Աստվածածին, Գյումրիի Յոթ-վերք, Հրազդանի Սուրբ Աստվածածին, Արմավիրի շրջանի մի գյուղի և Ստեփանավանի եկեղեցիները: Համապատասխան ուշադրություն հատկացվեց նաև ներքին Սփյուռքի եկեղեցիներին: Վերանորոգման ու բարեզարդման աշխատանքներով ընդգրկվեցին Ախլցխայի, Ախալքալաքի, Թբիլիսիի Սուրբ Գևորգ և Սուրբ Էջմիածին, Բաքվի, Կիրովաբադի, Օրձոնիկիձեի, Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի հայկական եկեղեցիները:

Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռը եկեղեցաշինության գործում օգտակար եղավ նաև Սփյուռքին, այդ գործում ներգրավելով հայրենիքի փորձառու ճարտարապետներին: Միլանի Սուրբ Քառասուն մանկանց և Նյու Յորքի Սուրբ Վարդան եկեղեցիների էսքիզային նախագծերի հեղինակը տաղանդավոր ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն է, Մոնտեվիդեոյինը՝ նույն Ռաֆայել Իսրայելյանն ու տողերիս հեղինակը, Վիեննայի Սուրբ Հռիփսիմե եկեղեցին կառուցվել է վաստակավոր ճարտարապետ Էդվարդ Սարապյանի նախագծով:

Նշված նախագծերը նույնպես անցել են Մայր Աթոռի ճարտարապետական հանձնաժողովի քննարկման բովով, արված դիտողությունների համաձայն հեղինակների կողմից վերամշակումների են ենթարկվել, ապա հանձնարարվել իրականացման:

Նոր շենքերի նախագծման ու կառուցման գործում շինարար Կաթողիկոսի ձեռքբերումները նույնպես արժանահիշատակ են: Նորակառույց շեն-

քերի թվին են պատկանում Գեղարդավանքի վանատունը (ճարտ. Ա. Գալիկյան), Հայկաշեն ամառանոցի շենքը Բյուրականի մերձակայքում (ճարտ. Ռ. Իսրայելյան), Մայր Աթոռի հյուրատունը և Ալեք Մանուկյան Գանձատան շենքը, որում ստեղծվեց եկեղեցական արվեստի գանձեր իրոք պարունակող մի թանգարան (երկուսն է ճարտ. Բ. Արզումանյանի նախագծով), Արարատյան թեմի առաջնորդարանի շենքը Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցուն կից (ճարտ. ճարտ. Հ. Խաչատրյան, Ա. Գալիկյան): Երիցատներ են կառուցվել Աշտարակի Մարինե, Հրազդանի Սուրբ Աստվածածին, Էջմիածնի Ծողակաթ և Սուրբ Աստվածածին, Երևանի Զորավոր եկեղեցիների բակերում, աղբյուր-հուշարձաններ՝ Սուրբ Էջմիածնի տաճարի և Նոր Վեհարանի, Սուրբ Հռիփսիմե, Սուրբ Գայանե, Ծողակաթ եկեղեցիների բակերում ու Գեղարդավանքում: Մատաղատուն կառուցվեց Սուրբ Գայանե տաճարի բակում (ճարտ. Ա. Գալիկյան), նոր զանգաշտարակ՝ Էջմիածնի քաղաքային Սուրբ Աստվածածին եկեղեցուն կից (ճարտ. Թ. Գևորգյան), տնտեսական բնույթի շենքեր՝ Մայրավանքի հարավակողմի բակերում:

Այսպիսի արգասավորությամբ է բնութագրվում Վեհափառ Հայրապետի ոչ լրիվ հիշատակված շինարարական գործունեությունը, որն արժանի է բարձր դրվատանքի:

«Ի վայելումն ազգիս Հայոց» խոսքերով են ավարտվում Վեհափառ Հայրապետի շինարարական արձանագրությունները, ու դրանում մեծ խորհուրդ կա, քանզի իր կառուցողական իրագործումները արժանահիշատակ պարգև են հարազատ ազգին, այնպիսի պարգև, որով նա ծանրակշիռ ներդրում է նատարել հայկական հուշարձանների վերականգնման ու հայ ճարտարապետության մերօրյա զարգացման ազգանվեր գործում:

Արվեստասեր և արվեստներին հովանավոր Վեհափառ Հայրապետ Վազգեն Առաջինի գահակալության տարիներին զգալի հարստացավ Մայր Աթոռի պատկերասրահը և գեղարվեստական ստեղծագործությունների հավաքածուն: Հավաքվեցին, ինքնամքով նորոգվեցին եկեղեցական գեղանկարչության և սպասքի, նկարազարդ վարագույրների, եկեղեցական հանդերձանքի և մետաղամշակման հազվագյուտ նմուշներ: Նկարիչ Գրիգոր Խանջյանի ջանքերով դրանք հանգրվանեցին Ալեք Մանուկյան Գանձատանը, կազմավորելով մի բացառիկ հարուստ թանգարան:

Ճարտարապետ-նկարիչ Բաղդասար Արզումանանի էսքիզներով և ոսկերիչ Ժիրայր Զուլոյանի կատարմամբ են ստեղծվել Հայոց այբուբենը և Սուրբ Խաչ բարձրարվեստ գործերը: Մեծ է եղել նաև նկարիչ Գրիգոր Խանջյանի ներդրումը: Նրա էսքիզներով է ստեղծվել «Հայոց այբուբենը», «Վարդանանք», «Վերածնված Մայր Հայաստան» գոբելենները, Էջմիածնի Մայր տաճարի խաչկալին Աստվածամոր փոխարինված նկարը, ազգային նկարագրով բնորոշ կահույքի նմուշները:

Զափազանց հարուստ է տեսականին Վեհափառ Հայրապետի պատվերով տարբեր արվեստագետների կողմից իրականացված նաև գեղարվեստական այլ կարգի գործերի: Դրանց թվին է պատկանում Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի Ավագ խորանի նոր վարագույրը (հեղ. Ա. Գալիկյան), սրբերի (Գրիգոր Լուսավորչի, Սահակ և Մեսրոպ, Ներսես Շնորհալու) անունները կրող եկեղեցական շքանշանները (հեղ. Բ. Արզումանյան), նույն հեղինակի էսքիզներով, ոսկերիչ Ժիրայր Զուլոյանի վարպետ ձեռքերով պատրաստված ոսկեկուռ Սկիհը և Հայրապետական գավազանագլուխը, այլ վարպետների պատրաստած պղնձակերտ կաթսաներն ու փայտակերտ գրա-

կալները և այլն: Դրանք բոլորը տոգորված են ազգային արվեստի ավանդույթների ոգով մեկնաբանման միտումով: Նույնպիսի հատկանիշներով են բնորոշ Նոր Վեհարանի և Մայր տաճարի բազկաթոռները ու աթոռները, Հռիփսիմեի վանատան ընդունելությունների սրահի ողջ կահավորումը, որոնց հեղինակն է շնորհաշատ նկարիչ Գրիգոր Խանջյանը:

Արվեստասեր Վազգեն Առաջին Կաթողիկոսը, հանդես գալով որպես մեկենաս, մեծ չափով նպաստել է գեղանկարչության, քանդակագործության և կիրառական արվեստի տարբեր ճյուղերի զարգացմանը, պայմաններ է ստեղծել արվեստի մեծարժեք ու մնայուն գործերի ստեղծման համար, որոնցով էապես հարստացան Մայր Աթոռի թանգարանների հավաքածուները:

Մայր Աթոռի վերաշինված ու վերակահավորված տպարանը հնարավորություն ընձեռեց հրատարակչական արդյունավետ գործունեության: Դրա առանձին մասը կազմեցին հայկական ճարտարապետության և արվեստի կոթողներին նվիրված (մասամբ արտասահմանում, պոլիգրաֆիական բարձր մակարդակով տպագրված), գիտա-հանրամատչելի աշխատությունները: Առանձնապես հիշատակելի են՝ «Հայկական եկեղեցիներ» (հեղ. Բ. Արզումանյան), «Հայկական խաչքարեր» (հեղ. Լ. Ազարյան), «Էջմիածնի գանձերը» (հեղինակային խումբ), «Եկայք շինեսցուք» (հեղ. Վ. Հարությունյան), «Ս. Էջմիածին», «Ս. Հռիփսիմե», «Ս. Գեղարդ» գրքույկները (հեղ. Ա. Սահինյան), «Մայր Աթոռ Ս. Էջմիածին» ու այդ կարգի այլ գործեր:

Առաջացած տարիքում Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը շարունակեց մնալ շինարարի դիրքերում: Նրա գլխավոր մտահոգությունը եղավ Երևանում կառուցվելիք Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարը, որի հիմնարկեքի հանդիսավոր արարողությունը անձամբ կատարեց 1991 թ. գարնանը: Դրա կառուցումը պիտի ավարտվի 2001 թվականին, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:

«Իմ հայացքը ուղղելով դեպի ապագան,—ասաց Վեհափառ Հայրապետը հիմնարկեքը օրհնելիս,—իմ հոգու աչքերով տեսնում եմ այն հոյակապ տաճարը, որ պիտի բարձրանա այստեղ և սուրբ խաչը պիտի պլանա դեպի երկինք: Հավանաբար ես այստեղ չեմ լինելու, բայց գուցե կհիշեք ինձ այդ օրը»:

Ափսոս, շատ ափսոս, որ չես լինի: Երևի նաև ոմանք մեզնից: Բայց հուսով ենք, որ սկսած գործը ավարտի կհասնի: Թող մայրաքաղաքի համայնապատկերը զարդարող այդ նորաշեն ու հոյաշեն տաճարը (հեղինակ՝ վաստակավոր ճարտարապետ Ստեփան Քյուրքչյան) ծառայի քո անմոռաց հիշատակի հավերժացմանը, քանզի քո շուրջ 40-ամյա ազգանվեր ու բեղմնավոր հոգևոր-ազգային գործունեության բաղկացուցիչներից մեկն էլ շինարարական գործունեությունն էր, որով պատմության մեջ պիտի մնաս նաև որպես շինարար Կաթողիկոս:

Գործընկերներիս հետ միասին բախտավոր ու հպարտ ենք, որ քո իմաստուն հուվանու ներքո ծառայեցինք շինարարական լայնածավալ ծրագրերիդ իրագործմանը:

Վարձքդ ի կատար մեզ, սիրելի Հայրապետ, մեր շինարար ազգի պայծառ զավակ: Անունդ ոսկե տառերով պիտի գրանցվի մերօրյա տարեգրության մեջ:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ